Խնկապատար, օծուն, ջահուած ժամի պէս
Սա իրիկո՛ւնն ըլլայի ես:

Սա իրիկուն ըլլայի ես,
Իմ անդորրիս մէջ ոգեւար աղջըկան
Մարող ճրագին բոցեր տալու իմ ցոլքէս.
Սա իրիկո՛ւնն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,
Լի գոռ ծափովն ովկիանի ջուրերուն.
Սիւքին ծաղիկ մեղեդիքովն ակաղձուն,
Սա իրիկո՛ւնն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,
Որ կը մարի սատափ բարձին վրայ ցայգուն.
Թօթափող վարքսը գունագեղ ու ծըփուն,
Սա իրիկո՛ւնն ըլլայի ես:

Սա իրիկո՛ւնն ըլլայի ես,
Համայնական, չքնաղ, քաղցրիկ, լուսագէս.
Եւ ամէնուն տայի հուրքէս, ոսկիէս:
Սա իրիկո՛ւնն ըլլայի ես:

23. ՀՈՎԸ

Ալիքներուն վրայ ոստոստող հովն ըլլայի,
Ու ջուրերուն խուլ մըռունջին մէջ ամայի՝
Ձկնորսներու ականջն ի վար փսփըսայի
Սիրուած երգեր, քաղցրութիւնով օծուն բառեր:

Հովն ըլլայի կատարներուն վրայ պարանցիկ,
Ու ձիւնին մէջ սառող մարդուն համար լայի.
Հովն ըլլայի՝ հողվրտիքին մէջ երգեցիկ՝
Ու ծըծէի տակաւ գաղտնիքն ես Անդիի:

Ձըմեռներուն ես ամպավար հովն ըլլայի,
Եւ անճըրագ խուղերու ճիչն հորձքիս ձուլած,
Անցորդներու հոգւոյն վըրայ փշրըւէի
Իբրեւ ալիք: Ու տանէի հոն կոծն ու լաց